

ՀՀ ՏԿԱԻ նախարարի աշխատանքային այցը Արագածոտնի մարզ

ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված հրատապ ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը եւ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը հոկտեմբերի 6-ին այցելեցին մարզի համայնքներ: Նրանք ծանոթացան Կարբիի ճանապարհի հիմնանորոգման, Արտաշավանի մշակույթի տան վերանորոգման, Քուչակի մարզադահլիճի նորոգման, Օշականի փողոցային լուսավորության շինարարության, Ագարակի բուժամբուլատորիա վերանորոգման, Ապարանի Ապարան քաղաքի թիվ 13 և թիվ 22 շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ընթացքին:

Կարբի գյուղի ճանապարհի վերանորոգումը մեծ նշանակություն ունի գյուղի զարգացման համար: Այն միացնում է գյուղի գլխավոր թաղամասը պետական մայրուղու հետ՝ ապահովելով գյուղի կենսունակությունը: Նախկինում մշակույթի տուն չունեցող Արտաշավանի համար էլ կարելու է մշակույթի տան հիմնանորոգումը, որը մեծ հնարավորություն է՝ զարգացնելու գյուղի մշակութային առօրյան:

Հրատապ ծրագրերից մեկը Քուչակ գյուղի մարզադահլիճի հատակի նորոգումն է: Այստեղ մարզվում է շուրջ 120 երիտասարդ մարզիկ, որոնցից շատերը մեծ հաջողությունների են հասել տարբեր մարզաձևերում: Առաջիկայում կլուծվի նաեւ մարզադահլիճի համար մարզասարքեր ձեռք բերելու հարցը:

Ապարան քաղաքում մարզպետ Սարգիս Սահակյանը ՏԿԱԻ նախարարին ներկայացրեց թիվ 13 և թիվ 22 շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքները, որից հետո նրանք այցելեցին արվեստի դպրոց եւ ծանոթացան դպրոցի սաների աշխատանքներին:

Օշական համայնքում նախարարը եւ մարզպետը ծանոթացան համայնքի լուսավորության ապահովման համար իրականացվող աշխատանքներին: Նախատեսվում է շուրջ 2,5 կմ լուսավորություն, ինչն անհրաժեշտ է զբոսաշրջությունը խթանելու նպատակով՝ նկատի ունենալով, որ այստեղ՝ Սրբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում է ակոփված Մաշտոցի գերեզմանը:

Այցելության վերջին կայանը Ագարակի բուժամբուլատորիան էր, որտեղ մարզպետը նախարարին ներկայացրեց ամբուլատորիայի վերանորոգման արդյունքները եւ ընթացիկ

խնդիրները: